

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 18/5

8 ապրիլի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Վլադիմիր Դավթյանի 21.03.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ 12.03.2014 թ-ի թիվ 2125777 ստուգման ակտի դեմ:

Ա/Ձ Վլադիմիր Դավթյանի գանգատում բերված փաստարկները.

2013 թ-ի հունվար ամսին ուշացումով արձակված հրամանի հիման վրա ատամնաբույժների համար սահմանված արտոնագրային վճարը՝ 60.000 դրամ, պետք է մուծվեր հունվար ամսին՝ հունվար և փետրվար ամիսները միասին: Նոր Նորքի ՀՏ աշխատակիցը Ա/Ձ Վլադիմիր Դավթյանին կանչել է իր մոտ և հատկացրել համապատասխան կողք ու ասել, որ հունվար և փետրվար ամիսների համար պետք է մուծել 120.000 դրամ արտոնագրային վճար: Տեղեկացվել է նաև, որ անհրաժեշտ է ներկայացնել հայտարարություն՝ արտոնագրային վճար վճարող համարվելու մասին: Ա/Ձ Վլադիմիր Դավթյանը հունվարի 29-ին Հայբիզնեսբանկի մասնաճյուղում կատարել է 120.000 դրամի վճարում՝ հունվար և փետրվար ամիսների արտոնագրային վճարները, և նույն օրը հարկային տեսչության առաջին հարկում լրացնելով արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարությունը, հանձնել է աշխատակցին: Հայտարարության հետ միասին հանձնել է նաև արտոնագրային վճարի կտրոնի պատճենը: Հարկային տեսչության աշխատակիցն ասել է, որ կգաք մի քանի օրից՝ հունվար և փետրվար ամիսների արտոնագրերը ստանալու համար: Մի քանի օրից Ա/Ձ Վլադիմիր Դավթյանը այցելել է հարկային տեսչություն արտոնագիրը ստանալու համար, սակայն այդ նույն աշխատակիցը ասել է, որ համակարգիչների հետ կապված կան ծրագրային խնդիրներ, որի պատճառով ժամանակավորապես արտոնագրեր չեն տրամադրվելու: Մինչև մայիս ամիսը ատամնաբույժներին նույն պատճառով արտոնագրեր չեն տրամադրվել:

Ա/Ձ Վլադիմիր Դավթյանը 2013 թ-ի փետրվարի 26-ին եղել է հարկային տեսչությունում և պահանջել մնացորդների վերաբերյալ տեղեկանք: Իրեն տրվել է այդ տեղեկանքը և չի տեղեկացվել, որ իր կողմից խախտվել է օրենքը: Միայն 2014 թ-ի փետրվար ամսին են տեղեկացրել, որ խախտվել է օրենքը և պետք է ակտ կազմեն:

Ա/Ձ Վլադիմիր Դավթյանը հավատացնում է, որ իր կողմից պետությանը վճարվելիք բոլոր տեսակի հարկերը կատարվում են բարեխղճորեն և ժամանակին:

Ըստ գանգատի, Ա/Ձ Վլադիմիր Դավթյանը չունի հնարավորություն հարկային տեսչության կողմից կազմված ակտի գումարը վճարելու, քանի որ իր խնամքին ունի անաշխատունակ ծնողներ և 2 անչափահաս երեխա:

Ելելով վերոգրյալից՝ Ա/Ձ Վլադիմիր Դավթյանը խնդրում է ստուգման ակտը ճանաչել անվավեր:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ պետի 21.02.2014 թ-ի թիվ 2125777 հանձնարարագրի Ա/Ձ Վլադիմիր Դավթյանի մոտ կատարվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ 12.03.2014 թ-ի թիվ 2125777 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ):

Ստուգման ակտով 2013 թ-ի հունվար և փետրվար ամիսների համար հարկային տեսչություն արտոնագրային վճար վճարող համարվելու վերաբերյալ սահմանված ձևի հայտարարություն չներկայացնելու համար, ղեկավարվելով «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի թիվ 8 հավելվածի դրույթներով, առաջադրվել է լրացուցիչ պարտավորություն՝ գումարով 360.000 դրամի:

Հանձնաժողովի անդամները փաստեցին, որ իրոք, 2013 թ-ին հունվար և փետրվար ամիսներին ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում որոշակի ծրագրային խնդիրների առկայությունը խոչընդոտ է հանդիսացել հարկ վճարողներին համապատասխան արտոնագրերի տրամադրման համար:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Վլադիմիր Դավթյանի կողմից 2013 թ-ի ընթացքում պարտաճանաչ կատարվել են արտոնագրային վճարի գծով պարտավորությունները, բացի 2013 թ-ի հունվար և փետրվար ամիսների մնացած բոլոր ամիսների համար հարկային տեսչություն է ներկայացրել արտոնագրային վճար վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, ինչպես նաև այն, որ տվյալ դեպքում ըստ էության բացակայում է Ա/Ձ Վլադիմիր Դավթյանի մեղքը, քանի որ ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում ծրագրային խնդիրների հետևանքով 2013 թ-ի հունվար և փետրվար ամիսներին չի հաջողվել լիարժեք կերպով իրականացնել արտոնագրերի տրամադրումը, Հանձնաժողովը գտնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Հարկ է նշել նաև, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված, ի վնաս սուբյեկտի իրականացված վարչարարության դեպքում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գլխավոր պայման է հանդիսանում այն, որ խախտում կատարած անձը զանցանք կատարած լինի մեղավորությամբ: Այսինքն պարտադիր է, որ անձը խախտումն իրականացրած լինի մեղքի առկայության պարագայում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ 12.03.2014 թ-ի թիվ 2125777 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ